այնքան երկաթ կտրող սղոցի վրայ, որ առաջին անգամն էին տեսնում, որքան վարժապետի ուժի վրայ, որ կոտրեց երկաթը:

— Հիմա տեսա՞ր, — հարցրեց նա, դառնալով դէպի տէր հօր ապշած որդին, — կարելի՞ է գողանալ, թէ ոչ:

— Կարելի է, — պատասխանեց նա մեղմացած ձայնով, — եթէ ամէն գող քո սղոցը եւ քո ուժը կունենայ:

Նա իր սղոցը առանց ոչ ոքի ցոյց տալու ծալեց, կրկին գրպանը դրեց: Որքա՜ն մեծ նշանակութիւն է ստանում մարդ, երբ ռամկի մօտ կատարում է մի գործ, որ նրան զարմացք է պատճառում: Վարժապետի հնարագործութիւնը արագութեամբ տարածուեցաւ, եւ ամէն կողմից հարեւանները թափուեցան նայելու նրա վրայ: Բայց նա այնքան համեստ էր, որ իրան ցոյց չտալու համար շուտով մտաւ տէր հօր խրճիթը:

Այստեղ մենք գտանք նախաճաշիկի սեղանը պատրաստ: Երէցկինը ածեց ամանների մէջ մեզ ծանօթ պտոյկի մէջ եփած կերակուրը, որի երեսի վրայ լճացած իւղը առատութեամբ ծփում էր: Դա հարիսայի նման մի կերակուր էր, որին քեշկեկ էին կոչում:

Նախաճաշիկից յետոյ մենք դարձեալ հաւաքուեցանք ռեսի տանը: Այնտեղ սկզբում իջեւանել էինք, այնտեղից եւս պիտի ճանապարհ ընկնէինք: Եթէ այլ կերպ վարուէինք, տան տիրոջը վիրաւորած կը լինէինք: Մի գիշերոայ մէջ այդ մարդիկը այն աստիճան ընտելացան մեզ հետ, որ կարծես տարիներով դրանց մօտ կացած եւ դրանց հետ ապրած լինէինք: Մեծ դժուարութեամբ Ասլանը կարողացաւ համոզել, որ մեզ բաց թողնեն: Մեր ձիաները տարել, թաքցրել էին, որ մեր ուղեւորութեանը արգելք դնեն: Իւրաքանչիւր գիւղացի տրտնջալով ասում էր, «ապայ իմ հացից չի պիտի՞ կտրեք»: Եթէ ամիսներով մնայինք, նրանք մեզ տունից տուն ման կածէին եւ ամէն տեղ կը գտնէինք տան տիրոջ սեղանը ու սիրտը բաց մեր առջեւ:

Մեծ շնորհակալութեամբ մենք բաժանուեցանք այդ բարի եւ հիւրասէր գիւղացիներից: Ասլանը բոլորին ձեռք տուեց եւ նստեց իր ձին: Մուրադին, ընկուզենու կոճղ գնողին, թողեցինք այնտեղ: Նրա համար կարգադրեցին եկեղեցու բակում մի սենեակ, որտեղ պիտի բնակուէր նա, մինչեւ իր գործը վերջացնէր: Ես, Ասլանը եւ Ջալլադը ճանապարհ ընկանք:

Մեզ ճանապարհ դնելու համար ուղեկից եղաւ եւ վարժապետը: Նրա համար պատրաստել էին իր սեփական ձին: Նա ոտքից գլուխ սպառազինուած էր, ձեռքում կրում էր երկար նիզակը: Գիւղական աղջիկները մի առանձին հրճուանքով էին նայում այդ գեղեցիկ, վայելչակազմ ձիաւորի վրայ: Ու-